ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2025 թվականի N 1045-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ՄՇԱԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 23 նոյեմբեր 2025-ի թվականի N 150-Ն որոշման հրամանի հավելվածի 20-րդ կետի 1-ին ենթակետը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում սոցիալական ծրագրեր մշակող հետևյալ կազմով՝

1) Ասյա Պարգևի Հարությունյան - Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի,սպասարկման և գովազդի բաժնի պետ ,
2) Հովիկ Ազատի Մարկոսյան - ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան բնակվայրի վարչական ղեկավար,
3) Նաիրա Կնյազի Սարգսյան - Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի,սպասարկման և գովազդի բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար,
4) Լիլիթ Վաղինակի Ավետիկյան Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի,սպասարկման և գովազդի բաժնի գլխավոր մասնագետ,
5) Նադյա Հովիկի Բարոյան- Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,
6) Տարոն Հրայրի Պոպոյան - Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,
7) Նվարդ Արշալույսի Ղևոնդյան- Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,
8) Մերի Միհերի Ասլանյան - Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,
9) Ռուզաննա Վոլոդյայի Ավդալյան - համայնքի ավագանու անդամ,
10) Աիդա Շավարշի Մովիսյան -համայնքի ավագանու անդամ,

11) Արփինե Համլետի Դավթյան- ՄՄԾ Տաշիրի ՏԿ սոցիալական աշխատանքի և զբաղվածության ծրագերի բաժնի պետ,
12) Վրույր Սարգսի Պողոսյան - ՄՄԾ Տաշիրի ՏԿ սոցիալական աշխատանքի և զբաղվածության ծրագերի բաժնի ավագ սոցիալական աշխատող,
13) Անի Հրաչի Հակոբյան - « Լիարժեք կյանք» ՀԿ -ի սոցիալական մանկավարժ,
14) Սերինե Սերժիկի Ղազարյան- « Լիարժեք կյանք» ՀԿ -ի սոց.- համակարգող,
15) Հայկ Սարգսի Կիրակոսյան - համայքնի բնակիչ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 15
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2025 թվականի N 1046-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն համակարգող նախարարի 2006թ. օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1.2026 թվականի հունվարի 20-ին անցկացնել մրցույթ համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնների համար՝

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-25), ժամը՝11:30,
2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-26), ժամը՝11:30,
3)Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-28), ժամը՝11:30,
4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-29), ժամը՝11:30:

2. Մրցույթն անցկացնելու նպատակով օրենքով սահմանված կարգով հրապարակել հայտարարություն և ծանուցել մրցութային հանձնաժողովի անդամներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 16
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2025 թվականի N 1047-Ա

«Ա/Ձ ՌՈԼԱՆԴ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ ՌԱԶՄԻԿԻ» ՀԵՏ «ՀՀ ԼՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/140-1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄՏՀ-ԷԱՃԾՁԲ-25/140» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2025թ. դեկտեմբերի 2-ի N 2 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, որ «Ա/Ձ ՌՈԼԱՆԴ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ ՌԱԶՄԻԿԻ»-ն սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները՝ տուժանքի մասին համաձայնագրերի ձևով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. «Ա/Ձ ՌՈԼԱՆԴ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ ՌԱԶՄԻԿԻ»-ի հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար Տաշիր քաղաքի ամանորյա զարդարման և ձևավորման ծառայությունների մատուցման «ՀՀ ԼՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/140-1» ծածկագրով գնման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 16
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2025 թվականի N 1048-Ա

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐ ԴԱՎԻԹ ԴԱՎԻԹԻ ԷՆԳՈՅԱՆԻՆ ԵՎ ՆԱՐԵԿ ԳԵՎՈՐԳԻ ԷՆԳՈՅԱՆԻՆ, ՈՐՊԵՍ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՅՆԵՐ, ՍԿԶԲԱՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍԻ «ՍԱԲԻՆԵ» ՓՈՔՐ ԽՄԲՈՎ ՏՈՒՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 110-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավորության 2006 թվականի հունիսի 22-ի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կենտրոնացված հաշվառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի N917-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N962-Ն որոշումով, հիմք ընդունելով Տաշիր համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 16.12.2025-ի թիվ 12 արձանագրությունը և այն, որ անչափահաս երեխաների միակ ծնողը՝ Աննա Զավենի Էնգոյանը, ազատազրկված է՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ.Պրիվոլնոյե, 2-րդ փողոց, 3-րդ նրբանցք, տուն 2 հասցեի անչափահաս բնակիչներ Դավիթ Դավիթի Էնգոյանին (ծնված՝ 24.12.2018-ին) և Նարեկ Գևորգի Էնգոյանին (ծնված՝ 19.11.2009-ին) վերցնել սկզբնական հաշվառման՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ:

2.Անչափահաս երեխաներ Դավիթ Դավիթի Էնգոյանին և Նարեկ Գևորգի Էնգոյանին տեղափոխել Հայկական Կարիտասի «Սաբինե» փոքր խմբով տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 17
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2025 թվականի N 1049-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Սույն թվականի դեկտեմբերի 24- ին հրավիրել Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստ՝ հետևյալ օրակարգով՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին,

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին,

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին,

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին,

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում ընդգրկվող, պետական սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության տրամադրմանը համաձայնություն տալու մասին,

6. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դահլիճների վարձակալության վճարների չափերը 2026 թվականի համար սահմանելու մասին,

7. Տաշիրի համայնքապետարանի ենթակայությամբ «Տաշիրի մշակույթի կենտրոն» և «Տաշիրի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների դահլիճների և սենյակների վարձակալության վճարների չափերը 2026 թվականի համար սահմանելու մասին,

8. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի տաշիր համայնքի կողմից 2026 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին,

9.«Բոզոյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի վրա Ջերմոց 1-85*66, Ջերմոց 2-39*45 կառուցման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին,

10. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին,

11.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 23-ի N 54-Լ որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին,

12. Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության տեղական զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող վերականգնվող էներգիա և էներգաարդյունավետություն ֆինանսավորման ուղղության «Արևի լույս» ծրագրի շրջանակներում Տաշիր համայնքի համաֆինանսավորմանը համաձանություն տոլու վերաբերյալ,

13. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 17
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2025 թվականի N 1050-Ա

«ՆԻՏԻՄ » ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նիտիմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի դեկտեմբերի 17-ի N172-25 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 226,228 հասցեում գործող «Նիտիմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործադիր մարմնի ղեկավար Տիգրան Արշակյանի հայտը բավարարել և նրան տալ 2025 թվականի չորրորդ եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 18
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2025 թվականի N 1051-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳԵՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի օգոստոսի 3-ի «Չափից ավելի վճարված անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի կարգը սահմանելու մասին» N920-Ն որոշումով և հիմք ընդունելով Ժիրայր Վոլոդյայի Ղանդիլյանի դիմումը (մուտք՝ 17.12.2025-ի ՔԴ 1099-25)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. Ժիրայր Վոլոդյայի Ղանդիլյանին սեփականության իրավունքով պատկանող, Տաշիր համայնքում հաշվառված 0,92 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի 20316 (քսան հազար երեք հայուր տասնվեց) դրամ գերավճարը հաշվանցել և մարել Ժիրայր Վոլոդյայի Ղանդիլյանին սեփականության իրավունքով պատկանող, Տաշիր համայնքում հաշվառված անարժ գույքերի առկա հարկային պարտցավորությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 18
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2025 թվականի N 1052-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Անուշ Ժորայի Յավրումյանի (անձնագիր՝ AT0540853, տրված 12/08/2020թ.) դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2025 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 120-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնք, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան, 06-074-0025-0017 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան, Ա. Մռավյան փողոց, 57 բնակելի տուն (փոստային դասիչ՝ 2112) հասցեն համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 06132LMGVASX:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի հասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 18
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2025 թվականի N 1053-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 51-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2025 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 120-Ն որոշումով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի, Տաշիր համայնք, գյուղ Լեռնահովիտ 06-039-0030-0007 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Լեռնահովիտ, 9-րդ փողոց, 2 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Լեռնահովիտ, 1-ին փողոց, 6 մշակույթի տուն (փոստային դասիչ՝ 2107) հասցեն, համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 06042GSCRU5C:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի վերահասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 18
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2025 թվականի N 1054-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Վալտեր Ռաֆիկի Վարդանյանի (անձնագիր՝ AX0478623, տրված 17/09/2024թ.) դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2025 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 120-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնք, Տաշիր համայնք, գյուղ Պրիվոլնոյե, 06-092-0002-0051 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Պրիվոլնոյե, 7-րդ փողոց, 35/1 հողամաս (փոստային դասիչ՝ 2115) հասցեն համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 06232JRZQYNT:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի հասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 18
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2025 թվականի N 1055-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Վալտեր Ռաֆիկի Վարդանյանի (անձնագիր՝ AX0478623, տրված 17/09/2024թ.) դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2025 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 120-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնք, Տաշիր համայնք, գյուղ Պրիվոլնոյե, 06-092-0008-0050 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Պրիվոլնոյե, 5-րդ փողոց, 37 հողամաս (փոստային դասիչ՝ 2115) հասցեն համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 06232FJPXPB3:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի հասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 18
ք.Տաշիր